Պարոն/Տիկին ——————————————ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակար գավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն. Գաբրիելյանին՝ ի գիտություն

Գ. Բաղրամյան ——————

«18» հունիսի 2024

**ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Գ.Բաղրամյանին**

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Հանձնաժողովի աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - Լիանա Ազիզյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի օգնական (մամուլի քարտուղար),

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   - Բելգիա, Բրյուսել, 2024 թվականի հունիսի 09-15-ը:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝**
   - Շվեդիայի միջազգային համագործակցության զարգացման գործակալություն (SIDA):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** մասնակցել <<Զանգվածային լրատվամիջոցների զարգացումը և ժողովրդավարական ինքնակարգավորումը նոր թվային դարաշրջանում>> խորացված միջազգային վերապատրաստման ծրագրին:

6. **Քննարկվող թեմաները (հարցերը)՝**

   - Եվրոպական Թվային իրավունքներ (EDR), տվյալների պաշտպանություն, ազատ խոսքի իրավունք, թվային իրավունքների կրթություն,
   - Ապատեղեկատվության դեմ պայքար,
   - Լոբբինգը և ԵՄ ինտեգրացումը,
   - Թվային ծառայությունների մասին օրենք (DSA),

- Աուդիովիզուալ մեդիա ծառայությունների դիրեկտիվ (AVMSD),
- Եվրոպական մեդիա ազատության ակտ (EMFA),
- Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը թվային միջավայրում,
- Գովազդային Ինքնակարգավորում, գովազդային ոլորտում բարձր էթիկական ստանդարտներ:

Դասընթացի ընթացքում Հայաստանյան խումբը ներկայացրել է ՀՀ Զանգվածային լրատվամիջոցների օրենսդրական կարգավորումների և ինքնակարգավորման մեխանիզմների համատեղ մշակված նախագիծը (Ներքին ինքնակարգավորման տարբերակը): Նախագծում զուգահեռաբար ներկայացվել է նաև Հայաստանում հարակից ուղղություններով ձեռնարկված օրենսդրական փոփոխությունները, որոնք միտված են ինքնակարգավորման մեխանիզմների ներդրմանը:

**7. Հանդիպումները, ելույթները՝**

- Հանդիպում Եվրոպական թվային իրավունքներ (EDRI) կազմակերպության ներկայացուցչի հետ, ով ներկայացրեց Տվյալների պաշտպանության կանոնակարգը (GDPR),
- Հանդիպում ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության ծառայության (EEAS) մաս կազմող Արևելյան ռազմավարական հաղորդակցության օպերատիվ աշխատանքային խմբի (East StratCom Task Force) ներկայացուցիչների հետ: East Stratcom Task Force-ը մշակում և իրականացնում է ռազմավարություններ և քարոզարշավներ, որոնք նպատակ ունեն բացահայտել և հերքել ապատեղեկատվության արշավները, որոնք ուղղված են ԵՄ-ի և նրա անդամ երկրների դեմ,
- Ճանաչողական այց Եվրախորհրդարան,
- Հանդիպում ԵՄ Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության (DG-NEAR) ներկայացուցիչների հետ,
- Հանդիպում Եվրոպական գովազդային ստանդարտների դաշինքի (European Advertising Standards Alliance) ներկայացուցիչների հետ:

Ելույթներ չեն եղել:

**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Դասընթացի ընթացքում որոշումներ և փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկություններ, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

---

**Գործուղվող՝ Լիանա Ազիզյան** ______________
(ստորագրություն)

18.06.2024

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

**Օրինակելի ձև**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 432-ՀՆ, 21.05.2024թ.**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի նախագահի օգնական ՝ **Լիանա Ազիզյան,**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **Բրյուսել / Բելգիայի Թագավորություն /**

5. Գործուղման ժամկետները **09.06-15.06.2024թ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) իրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, **օրապահիկ** և այլն)

(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | *Լիանա Ազիզյան* | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Ճանապար-հածախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | | |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | |
| | Օրերի քանակը | | |
| | Ընդամենը (դրամ) | | |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | |
| | Օրերի քանակը | | |
| | Ընդամենը (դրամ) | | |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | |
| | Այլ ծախսեր (*նկարագրել* ) | | |
| **Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)** | | | |

**Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,**

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ

19.06.2024թ.